

ՀՐԱԳՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, Բ.Գ.Թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտ

**ՕՏԱՐՄԱՆ ԴՐԱՄԱՆ ՈՐԲՈՒՆՈՒ «ՓՈՐՁ»
ԵՎ ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ»
ՎԵՊԵՐՈՒՄ**

(համեմատական քննության փորձ)

«Ֆրանսահայ գրականության ամենէն խիտ ու ստեղծարար»¹ շրջանի (1929-1934 թթ.) սկիզբը նշանավորվեց երկու կարևոր ստեղծագործությամբ. առաջինը «սերունդին անդրանիկ կատարյալ վեպը» (Հակոբ Օշական)² համարվող և հայալեզու սփյուռքում ամենից շատ վերատպված Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպն է, երկրորդը՝ Չարեհ Որբունու «Փորձը»՝ առաջինի բացառիկ հաջողությամբ և երկրորդին վիճակված «հանրության ցուցաբերած յարաբերական (կամ ամբողջական) անտարբերությամբ»³: Պատճառը, որ Շահնուրի վեպը մեզանում հայ գրականության լավագույն վեպերից մեկի համարումն ունի, այն է, որ հայ գրաքննադատությունը գեղարվեստական գրականության գնահատման չափանիշների մեջ նախապատվությունը միշտ էլ ազգային նշանակությանն է տվել. հակառակ պարագայում Որբունու վեպն անտարակույս ավելի լայն ճանաչման կարող էր արժանանալ. գեղարվեստի առումով ու տեխնիկայի վարպետությամբ «Փորձը» ժանրի առավել «կատարյալ» նմուշ է, քան սխեմատիզմով ու գաղափարական ընդգծված միտումնավորությամբ հատկանշվող «Նահանջ»-ը, որ, հեղինակի ստեղծագործական կյանքում առաջինը լինելով իբրև վեպ, մնաց միակը: Շահնուրը վիպական շնչի գրող չէ անշուշտ,

¹ Պլլտան Գ., Ֆրանսահայ գրականություն, Եր., Սարգիս Խաչենց-Փրինթինֆո-Անտարես, 2017 թ., էջ 171:

² Մեջբերումն ըստ Սեյրան Գրիգորյանի «Բանասիրություն և բանավեճ» գրքի, Երևան, «Ձանգակ-97», 2002 թ., էջ 53:

³ Նշանեան Մ., «Գրականությունը որպես սրբագրություն», տե՛ս Որբունի Չ., «Հայածուածները», Եր., Աշոտ Հովհաննիսյանի անվ. հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, 2020 թ., էջ 423:

մինչդեռ Որբունին, որ շարունակեց իր «փորձագրությունն» իբրև վիպաշար («Փորձը» «Հալածվածները» վիպաշարը բացող առաջին վեպն է), դրսևորեց իր տաղանդն առավելապես որպես վիպագիր՝ նորագույն շրջանի հայ գրականության մեջ առաջինը լինելով, որ ժանրն (վիպական պատմությունը) ընկալում էր իբրև պատրվակ, «որով գոյութեան կը կոչուի անծանօթ հետազոտութիւն մը, որ լինելութեան հարցն է»⁴: Ժանրի՝ իբրև գոյաբանական հետազոտության ընկալումը քսաներորդ դարասկզբին գրականություն բերեցին ֆրանսիացի գոյապաշտները՝ Ժան-Պոլ Սարտրն ու Ալբեր Կամյուն. ըստ նրանց հետազոտել լինելությունը կամ գոյը, նշանակում է փիլիսոփայել, փիլիսոփայել գեղարվեստական պատկերի միջոցով: «Ուզո՞ւմ եք փիլիսոփայել,- խորհուրդ էր տալիս Կամյուն,- գրեք վեպեր»⁵: Որբունուց առաջ վեպը հայ գրականության մեջ բացառապես ազգային, պատմական, հոգեբանական կամ սոցիալական խնդիրների ու երևույթների գեղարվեստական հետազոտության միջոց է ընկալվել՝ հանգամանք, որ բնավ չի նսեմացնում վեպի արժանիքները: Այդպիսին է նաև «Նահանջը առանց երգի»: Վեպը, մասնավորապես սիրավեպը Շահնուրի համար ազգային խնդիրների արժարժման առիթ էր, ըստ որում գեղարվեստի միջոցով Շահնուրը լիովին չի հաղթահարել գաղափարական «առաջադրութիւնը», որ սխեմատիզմի է հանգեցրել: «Գրականութենէն անդին եւ այլուր» հոդվածում հեղինակն ինքն է մատնանշել իր վեպի «տկարութիւնները»՝ սխեմատիզմը կամ «կառուցման պարզաբանութիւն»-ը, «լեզուական թերութիւնները», «ջրոտ զգայնութիւն (սանթիմանթալիթէ) եւ անկատար ծանօթութիւն՝ մեր ազգային պատմութեան»⁶: Օշականի՝ Շահնուրի վեպին տրված չափազանց բարձր գնահատականը հասկանալի է այն իմաստով, որ գնահատման նրա չափանիշը «ցեղային ոգու» առկայությունն է ազգային գրականության մեջ: Առհասարակ «Նահանջի» մասին մեզանում խոսվել է բացառապես թեմատիկ-գաղափարական տեսանկյունից: Եվ Շահնուրն ինքն էլ գիտակցելով դա գրում է, թե «ընթերցող հասարակութիւնը» առավելապես ուշադրություն է դարձնում վե-

⁴ Նույն տեղում, էջ 252:

⁵ Մեջբերումն ըստ Андреев Л., Жан-Поль Сартр. Свободное сознание и XX век, М., Geleos, 2004, с 36.

⁶ Շահնուր Ծ., Լրագրական էջեր, Եր., Ազգ, 2016 թ., էջ 104:

պի «ազգայնական ոգիին»: «Երբ այսօր մամուլը կը մեծարե իմ այդ հին գիրքը, առիթ բռնելով հեղինակին վաթսուամեակը, գրականութենէ տարբեր բան մը ունի աչքի առջեւ,- գրում է,- ան կը մեծարե գաղափար մը, որ միաժամանակ առաջադրութիւն մըն է - գիտակցիլ **օտարացման վտանգին** (ընդգծումը մերն է) եւ դէմ դնել անոր»⁷:

Շահնուրի վեպի վերնագրով էլ խորհրդահայ գրականագիտության կողմից կոչվեց սփյուռքահայ արձակի երկու հիմնական ուղղություններից մեկը՝ «նահանջի գրականություն»: Անշուշտ, արտագաղթից բխող ուժացման, ազգային ինքնությունից ու արմատներից «նահանջի» կամ օտարացման թեման քսաներորդ դարում ոչ միայն հայ, այլև շատ այլ ազգերի վերաբերող համամարդկային ընդգրկման խնդիր է, և այս նկատառումով էլ, գուցե հայ գրականության միակ ստեղծագործությունը, որ Փիթեր Բոքսելի խմբագրությամբ և Փիթեր Աքրոյդի առաջաբանով լույս տեսած «Հազար ու մի գիրք» (որ անհրաժեշտ է կարդալ մինչև մահ» (1001 books you must read before you die, 2006) հանրահայտ գրքում Շահնուրի վեպն է ընդգրկված միայն: Ինչ վերաբերում է «Փորձը» (կամ «Հալածումները» վիպաշարը), այսպես կոչված, «նահանջի» գրականության» շարքին դասելու փորձին, ինչպես վարվում էր, օրինակ Գեղամ Սևանը «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծերում»⁸, այնքան էլ հիմնավոր չենք համարում այդ դասակարգումը նախ այն պատճառով, որ Որբունու վեպի հերոսը դեռ քսաներորդ դարասկզբի գրականությունից մեզ ծանոթ ազգային նկարագրից, խառնվածքից և կամքից զուրկ մարդն է, մինչդեռ Շահնուրի Պետրոսը կամ Պիեռը, որքան էլ կամքից թույլ և «նահանջող», բայց անշուշտ խառնվածքով օժտված կերպար է, և այդ խառնվածքի փորձաքարը դառնում է նրա սերը Նենեթի հանդեպ: Այնինչ Որբունու հերոսն ասես անընդունակ է սիրո, նա աշխարհի, իրականության հետ կապվելու համար անծանոթ և անանուն աղջկա հետ է *փորձում* պատահական կապ հաստատել և ծախողում այդ փորձը, նա ինքն էլ կարծես անուն չունի (վեպում հերոսի անունը գրեթե չի շոշափվում), նա գրեթե անանուն կերպար է, և դա ոչ միայն առաջին դեմքի պա-

⁷ Նույն տեղում, էջ 104:

⁸ Տե՛ս, Սևան Գ., «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր» (1946-1985), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997 թ., էջ 274:

տումով պայմանավորված իրողություն է, այլև կերպարի՝ հասարակությունից օտարման և հատկապես անհատականազրկման որոշակի ցուցիչ, իսկ առաջին դեմքը գոյապաշտության խոստովանական (ինքնահայեցման, ինքնագնման ու ինքնաքննադատման) բնույթի պատումին բնորոշ տեսանկյուն էր, որ սկիզբ է առնում Ֆյոդոր Դոստոևսկուց «Գրառումներ ընդհատակից» վիպակից, հանդիպում է Ֆրանց Կաֆկայի («Մի շան հետագոտությունները»), Ալբեր Կամյուի («Անկումը») և հանդիպում ազգային շատ այլ գրականություններում:

Շահնուրը երրորդ դեմքով պատումն է նախընտրում, որպես հեղինակ նա օտարված է իր հերոսից (հերոսներից): «Նահանջ»-ում գործ ունենք երկակի օտարման հետ. ոչ միայն հեղինակն է օտարված հերոսից, այլև հերոսը ինքն իրենից: Ըստ էության, «նահանջը», որ իբրև հոգեբանական երևույթ, ազգային մեկնաբանություն է ստացել, գեղարվեստական բնորոշումն է մի երևույթի, որը նախ և առաջ գոյապաշտական փիլիսոփայության ու հոգեբանության հասկացություն է՝ երևույթ, որ Շահնուրի վեպի առնչությամբ ազգային խնդրադրումից դուրս՝ գոյապաշտական փիլիսոփայության և հոգեբանության տեսանկյունից Գրիգոր Շահինյանի որոշ նկատումներից բացի հայ գրականագիտության կողմից մնում է չուսումնասիրված: Խոսքն *օտարացում* կամ *օտարում* հասկացության մասին է, որ անշուշտ ավելի լայն հասկացություն է, քան այն, ինչ մեր գրականագիտության մեջ ուսումնասիրվել է որպես «նահանջ»:

Կարելի է տարբերակել մարդու օտարման տարբեր տեսակներ, աստիճաններ և քաղաքական փուլեր՝ օտարում բնությունից, Աստծուց, մարդկային հանրույթից, իրականությունից, վերջապես սեփական ինքնությունից՝ նորագույն ժամանակներին բնորոշ մի իրողություն: Կեցության իմաստը որոնող, գոյապաշտական հայացքով աշխարհն ընկալող մարդը կարող է օտարվել հասարակությունից, մենանալու և մերժենալու համար սեփական ինքնությանը կամ Աստծուն, որից երկրային գոյության կարճատև ընթացքում հեռացած է զգում իրեն, ինչպես Գաբրիել Մարսելի և Լեոն Բլուայի փիլիսոփայության մեջ կամ Ֆրանսուա Մորիակի վեպերում: Մենության ու լքվածության այս զգացումը հավասարապես վերապրում է թե՛ կրոնական, թե՛ «աբսուրդ մարդը» (Կամյուի բնորոշումը), որ իրենից դուրս միայն կեցության աբսուրդ է տեսնում,

քանի որ իր մտային ջանքերից վեր է կապեր գտնել և իմաստավորել աշխարհը. «Ինչպիսի համառությամբ են բնությունը, ամենասովորական բնանկարները մեզ ժխտում,- գրում է Կամյուն:- Ամեն գեղեցկություն իր խորքում անմարդկային ինչ-որ բան ունի, և հենց որ մենք գիտակցում ենք դա, շրջապատում ամեն ինչ՝ բլուրները, երկնքի քնքշությունը, ծառերի ուրվագծերը, կորցնում են մեր հաղորդած պատրանքային իմաստը ու մեզանից ավելի են հեռանում, քան կորուսյալ դրախտը: Աշխարհի նախնական ատելությունը միլիոնավոր տարիներ անցնում, գալիս գտնում է մեզ: Մի ակնթարթում մենք դադարում ենք հասկանալ աշխարհը»⁹: Մարդու *խզոււմը* (այս հասկացությունն է օգտագործում նաև Շահնուրը, որպես օտարացմանը նույնական հասկացություն¹⁰) բնությունից, Աստծուց, իրականությունից, իր նմաններից և ինքն իրենից գոյապաշտներն անվանում են օտարում, երևույթ, որ գեղարվեստական գրականության մեջ խորքային կերպով քննվեց հատկապես ֆրանսիական գրականության և մասնավորապես Սարտրի «Սրտխառնոց» (1938) և Կամյուի «Օտարը» (1942) հանրահայտ վեպերում, որոնցից հատկապես երկրորդը հետաքրքրական աղբյուրներ ունի շատ ավելի վաղ գրված Որբունու «Փորձը» վեպի հետ:

Թե՛ Կամյուի, թե՛ Որբունու հերոսները հասարակությունից առանձնանում են օտարականի իրենց էությամբ ու «անհեթեթ» կամ հանրության կողմից անընկալելի վարքագծով, և այդ իսկ պատճառով էլ հասարակությունը ժխտում, դուրս է մղում նրանց: Որբունու վեպի հերոսը համառորեն *փորձում* է հասարակության մի մասնիկը դառնալ, և ամեն անգամ ապարդյուն: Ըստ որում Որբունու վեպում հայ մարդու և ֆրանսիական հասարակության խնդիր առհասարակ չկա: Սա կարևոր նկատում է՝ հասկանալու համար Շահնուրի և Որբունու վեպերի էական տարբերություններից մեկը:

Կամյուի վեպի հերոսը բացարձակապես անտարբեր և աշխարհին օտար տեսակ է և կեցության իմաստի դատարկը գործունեության կամքից իսպառ զրկում է նրան, նա, կարծես, ընդամենը մի անգամ է «գործում»՝ սպանելով արաբին, բայց այդ գործողության էլ որևէ իմաստ կամ ռացիոնալ բացատրություն չի կարողանում տալ: Որբունու հերոսը բավա-

⁹ Կամյու Ա., Սիգիփոսի առասպելը, Եր. Ապոլոն, 1995, էջ 21-22:

¹⁰ Շահնուր Շ., Լրագրական էջեր, Եր., Ազգ, 2016, էջ 106:

կան գործուն կերպար է, բայց նրա գործունեության շարժիչ ուժն, ըստ էության, օնթոլոգիական չէ, այլ սոցիալական: Ի տարբերություն Կամյուլի հերոսի կեցության աբսուրդին նա բախվում է միայն «գոյության պայքար»-ի արդյունքում, մի գիծ, որ ֆրանսիական էկզիստենցիալիզմի գրականության մեջ հանդիպում է Կամյուլի աշխարհայացքի վրա մեծ ազդեցություն թողած Անդրե Մալրոյի վեպերում մի տարբերությամբ, որ նրա հերոսները կեցության աբսուրդին բախվում են քաղաքական պայքարի վերջնարդյունքում: Ի տարբերություն Մալրոյի, Կամյուլի և Որբունու վեպերում քննվում է անհատի և հասարակության բախումը և խզումը, որի վերջնարդյունքն էլ ծնվում է օտարման ու աբսուրդի զգացումը: Հասարակությունը չի ներում Մերսյոյին նրա անտարբերությունը (որն ի դեպ ցուցաբերում է նաև սեփական ճակատագրի հանդեպ) և նրա համար պախարակելի ու նույնիսկ մահվան դատավճռի է արժանի մոր թաղման օրը սուրճ խմելու հանգամանքը: «Այսօր մեռել է մայրս»¹¹, - այսպես է սկսվում Կամյուլի «Օտարը»: Մոր մահը իբրև հասարակության ու իրականության հետ կապերի վերջնական խզման պատրվակ է դառնում նաև Որբունու շատ ավելի վաղ գրված վեպի հերոսի համար: Որբունու հերոսը ևս մոր թաղման օրը սուրճ է խմում, ինչպես և «Օտար»-ում: Իր կամքից ու ցանկությունից անկախ հայտնվելով մարմնավաճառ կանանց միջավայրում՝ Որբունու հերոսը մոր հուղարկավորության ծախսերը հոգալու համար վաճառած գրքերի գումարն ամբողջությամբ մսխում է մարմնավաճառների վրա և հանկարծ սթափվելով զգում, թե ինչպես է իրականությունը դուրս գալիս մարդկային գիտակցության ու կամքի վերահսկողությունից ու դառնում անկասելի: Խզվում է իրականության ու մարդկային գիտակցության կապը. Որբունու հերոսը դադարում է հասկանալ, թե ինչ է անում ինքը տվյալ իրադրության մեջ, օտարման ուժեղ տպավորություն է ստեղծվում և հերոսի մոտ աբսուրդի զգացում է առաջանում: Թե՛ Կամյուն, թե՛ Որբունին հուշում են, որ մոր մահով վերջնականապես կտրվում է մարդու և իրականության պորտալարը, մարդու վերջնական լքվածությունն ու որբացումը: Եթե կրոնական գոյապաշտների մոտ մարդը լքված էր Աստծուց, ապա առանց Աստծու աշխարհում մարդու և աշխարհի կապը խորհրդանշում է մայրը:

¹¹ Կամյուլ Ա., Օտարը, Եր., Ապոլոն, 1994, էջ 4:

Իրականությունից մարդու օտարման այս երևույթը Կամյուլի վեպի սյուժեի միակ զսպանակն է: Թե՛ Որբունին, թե՛ Կամյուն փորձում են իրականությունից մարդու օտարվածության փաստը համառորեն հասցնել հերոսի գիտակցությանը: Որբունու հերոսի մոտ այդ գիտակցությունն առաջանում է մոր հուղարկավորության գումարը մարմնավաճառների վրա մսխելուց, Կամյուլի հերոսի մոտ մահվան դատավճռից հետո: Մահից առաջ Մերսոն կրկին հիշում է մորը. «Առաջին անգամ երկար ժամանակից ի վեր ես մտածեցի մորս մասին: Ինձ թվաց հասկացա, թե կյանքի վերջում ինչու նա «նշանած» ընտրեց իր համար, ինչու ձևացրեց, թե ամեն ինչ վերսկսում է նորից: Այնտեղ, այնտեղ նույնպես, այդ ծերանոցի շուրջը, որտեղ կյանքեր էին հանգչում, երեկոն ասես մի դադար է մելամաղձոտ: Մահվանն այդքան մոտ կանգնած, մայրս երևի իրեն ազատագրված էր զգում, պատրաստ վերապրելու ամեն բան: Ոչ ոք, ոչ ոք իրավունք չունեի լացելու նրա վրա: Իսկ ես, ես նույնպես ինձ պատրաստ եմ զգում վերապրելու ամեն բան: Կարծես այդ բուռն զայրույթն ինձ մաքրեց չարից, դատարկեց հույսից՝ նշանազարդ և աստղալից երկնքի դիմաց. ես բացվում էի աշխարհի քնքուշ անտարբերության առջև»¹²: Որբունու հերոսը Կամյուլի Մերսոյի պես աշխարհի «քնքուշ անտարբերությանը» (որ քնքուշ, բայց անհոգ, անտարբեր, զվարճասեր ու հեշտասեր մարմնավաճառների տեսքով է նրան ընդառաջ գալիս) բախվելուց հետո չի հանձնվում աբսուրդին, ամեն ինչ *փորձում* է վերսկսել նորից: «Օտարի» սյուժեն ուղղագիծ է, «Փորձի» սյուժեն՝ պարուրած: Այսպես մի քանի անգամ կրկնվում է անծանոթ մարդկանց, ամբոխի մեջ օտարման իրադրությունը (առհասարակ Որբունու վեպի սյուժեն սոցիալական և էկզիստենցիալ տարբեր մոտիվների ուժգնացող պտույտի ձևով է զարգանում), ինչպես և բոլոր կրկնվող մոտիվները: Կամյուլի վեպի ֆաբուլան հակառակն է. ամեն ինչ սկսվում է մոր մահից, Որբունու դեպքում հանգուցալուծվում: Մերսոն չի փորձում իրականության հետ կապ հաստատել և դրա համար էլ չի փորձում փախչել: Մինչդեռ Որբունու հերոսը օտարման զգացողության սրման պահերին փախուստի ու վազքի է դիմում և ապա նորից փորձում կապի մեջ մտնել իրականության հետ: Հույսն ամեն անգամ նորացվում է հասարակությանը մերժենալու նոր փորձով, բայց

¹² Նույն տեղում, էջ 90:

դրան անմիջապես կրկին հաջորդում է փախուստն ու անհուսությունը: Հույսի և անհուսության հերթագայման այս վիճակը Կաֆկայի վեպերի օրինակով և Սիգիփոսի առասպելի գոյապաշտական մեկնությամբ խորությամբ քննել է Կամյուն՝ նկատելով, որ ողբերգականությունը մարդկային համառությունից է ծնվում: Որբունու հերոսը յուրօրինակ Սիգիփոս է, որ ամեն օր իր սոցիալական քարը բարձրացնում է լեռն, իսկ այն իսկույն գլորվում է ցած, որպեսզի անընդհատ կրկնվի նույն **փորձը**:

Այսպիսով, Կամյուի վեպի հերոսին ընդհանրապես խորթ է իրերի մեկընդմիշտ հաստատված կարգի մեջ որևէ բան փոխելու ձգտումը, Որբունու հերոսը փորձում է փոխել իրականությունը, բնականաբար իրեն առնչվող (ինչպես ակնարկվեց, նա լայնամասշտաբ սոցիալական պայքարի կոչված անհատ չէ, ինչպես Մալրոյի հերոսները) ու տապալվում: Այսպիսով, Որբունու և Կամյուի վեպերի էական տարբերությունն այն է, որ օտարման երևույթը Կամյուի վեպում բացահայտվում է օնթոլոգիական, Որբունու վեպում՝ սոցիալական կոնտեքստում: Անդրադառնալով Շահնուրի վեպին, նկատեցինք, որ այն ազգային կոնտեքստում է քննում օտարումը: Պետրոսը կամ Պիեռը իրականությունից օտարված անհատ է նախ և առաջ իր մասնագիտությամբ, քանի որ իրականության լուսանկարչական ընկալումն ինքնին իրականությունից օտարում է ենթադրում: «Լուսանկարչական հայեցման սովորույթը՝ իրականության ընկալումն իբրև պոտենցիալ լուսանկարների շարք, ոչ թե բնության հետ միասնության, այլ նրանից օտարման է տանում», - գրում է Սյուզեն Չոնթագը¹³: Մարդն ասես ընտրում է իրականության օտարված դիտորդի կամ հայեցողի դիրքը: Հայտնվելով Փարիզում Շահնուրն ինքը լուսանկարչական գործունեությունն ընտրել է միաժամանակ և՛ այդպիսի դիտորդ մնալու և՛ ֆրանսիական հասարակությանը ներգրավվելու համար, ինչ-որ իմաստով դառնալու համար ֆրանսիացի (Արմեն Լյուպեն), շարունակելով մնալով հայ (Շահան Շահնուր)։ չէ՞ որ իբրև գրող ազգային խնդիրների մասին գրում էր հայերեն, իսկ ազգայինից դուրս՝ ֆրանսերեն: Եվ իր պես իր հերոսին էլ է բնորոշ անվանափոխությունը, երկլեզվությունը, երկփեղկումն ու իրականության օտարված ընկալումը: «Փարիզը անոր

¹³ Сонтаг С., О фотографии, М., Ад Маргинем Пресс, 2013, с. 131.

վրայ ալ դրաւ իր արտաքին վայելչութեան դրոշմը ու տարիները անցան այդ կիներուն պէս մերկ, անսէր»¹⁴: Բայց Շահնուրին իբրև գաղափար հետաքրքրողն առավելապէս ազգային ինքնութիւնից «օտարացման վտանգն» է, որ նաև ինքնաօտարման խնդիր է, ըստ Էուբյան: Մինչև ինքնութեան ո՞ր շերտն է մարդը նույնանում ինքն իր հետ և օտարվում սեփական Էութիւնից: Անշուշտ ազգային ինքնութիւնն այն խորքային շերտերից է, որի հետ մարդն այս կամ այն չափով նույնացնում է իրեն, և լեզուն ու անունը փոխելը (Պետրոսը՝ Պիեռ) ինքնաօտարման գործողութիւններ են, որից հետո մարդուն (Շահնուրի հերոսին) մնում է նույնացնել ինքն իրեն արտաքին զգայական ու ներքին զգացական իրականութեան հետ: Այս իմաստով վեպում կարևոր դերակատարում ունի օրագիրը, որի մի մասը ֆրանսերէն է, երբ առկա է կիներ, իսկ երբ կիներ չկան, օրագիրը հայերէն լեզվով է. «Հաջորդող ամիսները անցան՝ ամբողջութեամբ հայերէն: Կին չկար: Գրուածքները միմիայն ներքին ապրումներ կը թուէին ըլլալ»¹⁵: Այդ ամենանձնականը, ինքնութեան միջուկը, որի հետ հերոսը կարողանում է նույնանալ, այն է, ինչ բխում է սրտից և որը միայն մայրենի լեզվով է արտահայտելի: «Սիւս այսպէս կուգայ վայրկեան մը, երբ ալ կ'ուզենք ըսել այն, որ մեր արիւնին ու ոսկորին մէջն է եւ որ չի թարգմանուիր: Որովհետեւ միայն մայրենի լեզուն է, որ բառերուն կրնայ տալ այն անկեղծ ու պարզ շեշտը, որ բնաւ մտածում չի պահանջեր: Եւ սիրտը երբոր կը խօսի, պետք չէ մտածել»¹⁶: Եվ այսպէս Շահնուրի հերոսն ինքնաօտարվում է մինչև այն շերտը, որտեղ ինքն իրեն զգում է համամարդ, որ կարող է տարբեր անուններ կրել: Որքունու հերոսը վերապրում և գիտակցում է իր մենութիւնն ու խորթութիւնը մարդկանց, բայց այդ օտարումը ինքնահայեցման նյութ չի դառնում նրա համար, չի դառնում ինքնաճանաչման միջոց, ինչպէս Շահնուրի հերոսի դէպքում: Ազգային խնդիրը՝ օտար միջավայրում ազգային ինքնութիւնից օտարման թեման Շահնուրի վեպում բեկված է սիրային պատմութեան պրիզմայով. սիրային արկածի միջոցով է, որ հերոսը գիտակցում և վերլուծում է իր օտարումը: Նրա սիրուհին Ժանը (Նենեթը) օտար իրականութիւնն է

¹⁴ Շահնուր Շ., Գեղարուեստական գործեր, Եր., Ազգ, 2016, էջ 21:

¹⁵ Նույն տեղում, էջ 35:

¹⁶ Նույն տեղում, էջ 48:

հենց խորհրդանշում: Պետրոսն ինքն էլ է հասկանում, որ այդ կինն օտար է իրեն. «Պետրոս բնաւ առիթը չունեցաւ իր սիրուհին մտերիմ կեանքի մէջ, ի՞ր միջավայրին մէջ տեսնելու, ոչինչ գիտցաւ անոր անցեալէն, ծնունդէն, անցուցած գիշերներէն եւ բնական բերումով մը իր սիրածը եղաւ խանութին Նենեթը»¹⁷: Օտարման զգացողությունը մարմնական մերձեցման դեպքում հոգեկան հեռավորության գիտակցումից է ծնվում, որ ավելի խորն է վերապրվում Որբունու հերոսի կողմից: Անծանոթ, փողոցում հանդիպած պատահական կնոջ հետ մարմնական մերձեցման փորձն ու պահը հերոսի համար իրականության հետ կապ հաստատելու հերթական **փորձն** է, որն էլ ավելի է խորացնում օտարման փորձառությունն ու դրաման. թե՛ այս, թե՛ սոցիալական կոնտեքստի, թե՛ պիկարոյական վեպի դեգերումների մասին պատմությունների հետ ունեցած առնչության իմաստով (պիկարոյական վեպի դեգերող հերոսների պես Որբունու հերոսին բնորոշ է նաև խաբելու և երևակայելու որակը): Որբունու վեպը որոշ աղերսներ ունի նաև Քսյուֆ Համսունի «Սովը» վեպի հետ, որի առանց այդ էլ իրականությունից օտարված ու քաղցած հերոսը ևս փորձելով մոտենալ անծանոթ կնոջը՝ օտարման դառը փորձառություն է ձեռք բերում՝ նորից մնալով իր սովի խնդրի հետ և ամեն անգամ իրականությանը մոտենալու տարբեր փորձեր է անում ու դուրս մղվում: Կառույցը, որ պիկարոյական վեպն է բերել գրականության՝ հերոսի դեգերումների պատմությունը սյուժետային *պատահականություն* է ենթադրում: Շահնուրի վեպը սյուժեի և կոմպոզիցայի իմաստով ավելի կանխապես մտածված, Հակոբ Օշականի խոսքով՝ «ճարտարապետված» և կառուցիկ է: Եթե Շահնուրի վեպը համարենք սիրավեպ, ապա Որբունու վեպը պիտի համարենք սոցիալական վեպ, քանի որ մեծ իմաստով օտարման վերապրումը չէ, որ կարևորվում է հերոսի կերպարում: Համսունի հերոսի պես նա մարդկային գոյության տարրական պայմանն է փորձում ապահովել և իր բնածին եղբայր Կամյուի կամ Սարտրի օտարականը չէ: Եթե Սարտրի, Կամյուի կամ հայազգի ֆրանսագիր Վահե Քաչայի վեպերում օտարվածությունն ու մենությունը օնթոլոգիական բնույթ են կրում, այսինքն օտարությունն ու մենությունը խորապես

¹⁷ Նույն տեղում, էջ 63-64:

պայմանավորված են մարդկային գոյի պատահականության փաստով, ապա Շահնուրի վեպում օտարումը ազգային, իսկ Որբունու վեպում սոցիալական բնույթ է կրում:

HRACHYA SARIBEKYAN- THE ALIENATION DRAMA IN SHAHAN SHAHNOURS «RETREAT WITHOUT A SONG» AND ZAREH VORPUNIS NOVEL «THE ATTEMPT» - The article explores the issue of individual alienation in the novels of Franco-Armenian writers Zareh Vorpuni “The Attempt” (1929) and Shahan Shahnur “Retreat without Song” (1929). The psychological phenomenon of alienation is observed in various relations and interactions with reality. If in Vorpuni’s novel “The Attempt” the issue of individual alienation is examined exclusively in social, then in Shahnur’s novel it is explored in the national context. The article examines the alienation of the heroes from society, from national identity, in love and sexual relations, in their choice of profession. A comparative analysis of these two novels with French existentialism, in particular with the work of Albert Camus, is carried out.

Key words - Alienation, self-alienation, desolation, an attempt to communicate, self-identification, meaninglessness of life, photographic perception of reality, existentialism, ontology, national identity, social conflict.

ГРАЧЬЯ САРИБЕКЯН- ДРАМА ОТЧУЖДЕНИЯ В РОМАНАХ ШАХАНА ШАХНУРА «ОТСТУПЛЕНИЕ БЕЗ ПЕСНИ» И ЗАРЕ БОРБУНИ «ПОПЫТКА» - В статье исследуется проблема отчуждения личности в романах французско-армянских писателей Заре Ворбуни «Попытка» (1929) и Шахана Шахнура «Отступление без песни» (1929). Психологический феномен отчуждения рассматривается в различных связях и взаимоотношениях с действительностью. Если в романе Ворбуни проблема отчуждения личности рассматривается исключительно в социальном, то в романе Шахнура в национальном контексте. Анализируются аспекты отчуждения героев вышеупомянутых романов от общества, от национальной идентичности, в любовно-половых отношениях и в профессиональном выборе. Проводится сравнительный анализ этих двух романов с французским экзистенциализмом, в частности, с творчеством Альбера Камю.

Ключевые слова - Отчуждение, самоотчуждение, одиночество, попытка общения, идентификация личности, бессмысленность бытия, фотографическое восприятие действительности,

Экзистенциализм, онтология, национальная сущность, социальный конфликт.

Reference

1. Beledian K., Fransahay grakanutyn, Erevan, 2017 (in Armenian)
2. Sevan G., Spjurqahay grakanutian urvagcer, Erevan, 1997 (in Armenian)
3. Vorpuni Z., Halacuacnery, Erevan, 2020 (in Armenian)
4. Shahnur Sh., Lragrakan ejer, Erevan, 2016 (in Armenian)
5. Shahnur Sh., Gexarvestakan gorcer, Erevan, 2016 (in Armenian)
6. Camus Al., Siziposi araspely, Erevan, 1995 (in Armenian)
7. Camus Al., Otary, Erevan, 1994 (in Armenian)
8. Sontag S., O fotografii, Moskva, 2013 (in Russian)